



ԿՃՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԾԱՂՐՈՂՆԵՐՈՒ ՕՌԿԱՆ

Ե Ի
ԱԶԳ. ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ-ՍԱՏԻՐԱԿԱՆ
Ծ Ա Ղ Ր Ա Թ Ե Ր Թ

Որ ամէն բան կը մերկացնէ, չլսածը կը պատմէ, չեղածը կը նկարագրէ:
միտք կ'երեւակայէ, կը ձողկէ եւ... Եւրոպականի:
Այս ամէնը կը հաւաքէ, կը դասաւորէ, կը խմբագրէ
ԳԵՐԻԳՈՐ ԹԱՐԵՍԵԱՆ (Բ. ԼՈՌԻՅԻՆԵԱՆ)

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուշու խան թիւ 7

Երկրորդ թիւ 8 Դեկտ. 1908

«ԿԱՎՈՐՈՇ» — «ԾԱՂԻԿ» ԵՂԲԱՅՐԱԿՈՒԹԻՒՆ

— ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ —

Ամէն մարդ դիտել կուտայ մեզ թէ՛ Կավոռ Եւ Ծաղիկ միասին զաւթ սուղի կը նստին:

— Մենք Կավոռ Եւ Ծաղիկ Եւ չենք կրնար զատուիլ, կ'ըսենք, բայց զինքներդ ինչ մը ամենուցեւ, որպէս զի երկուքն մէկանց բաժանորդ գրուինք:

Մեր բարձրագոյն անհանգիստ այս փափուկ խնդիրը նկատողութեան առնելու համար բացառիկ նիւս մը գումարեց եւ որոշեց հետեւեալ վերջնական սակագինը:

★ Կավոռ Եւ Ծաղիկ միասին, տարեկան, Պոլսոյ համար 80, վեցամս. եայ՝ 45 դրու: Կավոռ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 45 դրու:

Կավոռ Եւ Ծաղիկ միասին, տարեկան, Գաւառի համար 100, վեցամսեայ՝ 60 դրու: Կավոռ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 60, վեցամսեայ՝ 35 դրու:

Կավոռ Եւ Ծաղիկ միասին, Արշակունիքի համար տարեկան 25 ժր., վեցամսեայ՝ 13 ժր.: Կավոռ կամ Ծաղիկ՝ առանձին՝ տարեկան 15, վեցամսեայ՝ 8 ժրու:

★ Ձեր թերթ կուտանք կը եւ զանազանքեր մտնաւանդ:

Բայց ամէն մարդ զիտ արդէն թէ մենք փարայի համար չենք աշխատիր, —

ո՛հ, հա՛ւ լիցի, — այլ Հայ ազգին համար:

Թիի 58 Տնօրէն Ռ. Սազանեան 10 ՓԱՐՍ

زاغيك غزتي در عياده غلغله قورشولي خاندان نومرو ۷

ՀԱՅԿԱԿԱՆ... ՊՈՇՊՈՂԱԶՈՒԹԻՒՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ԹԻԿՆԱԹՈՒՆԵՐՈՒ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆԻՍՏԸ

Անկասկած, կա՛մ Օեւ ծովը կը ցամքի եւ կամ մեր շատախօս ազգ. թիկնաթոռներուն բերանը կը գոցուի:

Բայց երբ գուցէ հնարաւոր է տեսնել որ մը ցամքած Սեւ ծովը եւ անոր վրայ հիմնուած ազատ քաղաք մը, բայց եւս երբեք չեմ կարծեր որ մեր ազգ. թիկնաթոռներուն բերանը գոցուի եւ անոնք վազ անցնին շատախօսելէ:

Ուրբաթի վերջին նիստը հրաշալի երևում էր շատախօսութեան:

Եւ ազգը խնդրեց որպէս շատախօսներէն:

Կամ ա՛յն է որ Աստուած մեր անքաւելի եւ ծանր մէկ յանցանքին դէմ բարկացեր է եւ կամ այն է որ մենք, ինչ որ ալ ըլլայ, հաստատ կերպով մտքերնիս դրած ենք մարդ չըլլալ... հակառակ անոր որ այդ մասին ինքնահաւան ենք քառասուն Կասքոնացիի չափ:

Երեւակայեցէք ժողով մը, որուն մէջ կան մաղերնին մօրուքնին ճերմակած մարդիկ, ուր կան բժիկներ, փաստաբաններ եւ դրամատէրներ եւ այդ ժողովը չորս նիստերէ ի վեր — Սատանին հօրեղբայրը ըլլամ եթէ սուտ կը խօսիս — օրակարգ մը ուսնի որ երբեք չի փոխուի...

Այնպէս կրնայ մէկէն ի մէկ փոխուիլ, կրնանք մենք Հրատին մէջ փոխադրուիլ մէկէն ի մէկ եւ Հրատիք կրնան հոս իջնել փոխադարձաբար, կրնանք շատ մը աներեւակայելի եւ անկարելի բաներ երեւակայելի եւ կարելի դարձնել, բայց երբեք չեմ կրնար յուսալ որ մեր ազգ. ժողովը իր տարեղբայրէն առաջ պիտի կարենայ փոխել իր օրակարգը:

Ուրբաթ էր օրն եւ շաբաթ պիտի լուսնար միւս օրը...

Օգը պայծառ էր:

Ղալաթիոյ խորհրդարանին ժողովը բացուած հռչակուեցաւ... Միշտ Զերազ մարտանաւուն կողմէ:

Ամբողջ ժողովը ոտի ելաւ եւ Հոգոց մը կարդաց — տղթ. Թորգոմեանի խեղճ հանգուցեալ ատենապետութեան հոգւոյն համար:

Ստենապետին փոխուելովը կարծեցին շատեր թէ ամէն բան կարելի պիտի ըլլայ փոխել:

Հաւագոյն օրերու կը սպասէր ամէն ոք:

Բայց յոյսով աշխարհք չի դառնար:

Ընդհակառակը...

Ժողովը վիճաբանութեան ծայրէն բռնած՝ ա՛լ թող չէր տար այնքան սեղմ բռնած էր, անոր համար որ ըսուած է թէ՛ «Դու լաւ բռնէ քու գործդ եւ Աստուած կը յաջողցնէ»:

Կը տեսնէք. մենք փոխադրուելովնք եւ իմաստասիրութիւնը մինչեւ ո՛ր տեղեր հասցուցած ենք:

Ներկայ էր թզուկներու... հսկայ բազմութիւն մը:

Ամէն մարդ որ գործ չունէր եւ ժամանակ ունէր... սպաննելու, փութացած էր Ղալաթիոյ խորհրդարանը:

Հոն էր նաեւ մի ոմն Ագիլեան (Սեւաթուփեան) իր հարադատ զաւակին հետ եւ Շահրիբեանի դէմ գրած եւ թերթերուն կողմէ մերժուած մէկ յօդուածը առանձինն հրատարակած՝ կը բաժնէր...

Հոն էին նաեւ բոլոր աթեններն ու համեմատելը եւ նոյն իսկ... Արմենակ Ինճեան, իր ոսկեզօծեալ ակնոցով:

Ամէն մարդ իր տեղը գրաւած էր: Ազգ. թիկնաթոռները լուռ ու մունջ կը խոկային:

Ձանգակը հնչեց:

Ամէն մարդ կոճկուեցաւ:

Ղազարոս Չալաքեան 51րդ անգամ ըլլալով աչքերը բացաւ ու գոցեց:

Ռ. Թադէոսեան ներս մտաւ, ներս կաներուն ոտքերը կոխկուտելով:

Վիճաբանութիւնները սկսան, Լինել թէ չլինել:

Չպախեան. Լինել: Գասպարեան. Չը լինել...

Հորոյ. — Իսկ եթէ լինել...

Գարսեան. — Այո՛ւ պէտք է լինել...

Հմայեակ եպս. — Կեցո՛ւ Տէր եւ ղորմեա՛...

Էփեհրճեան. — Ես ա՛լ կ'ուզեմ, ես ալ կ'ուզեմ:

Թօփալեան. — Ե՛ս ալ կ'ուզեմ...

Եթէ ուտուելիք եւ կամ ծախուելիք բան է.

Եկիկնճեան. — (Բացակայ): Գոյումճեան. — Եթէ ո՛չ. կամ եթէ այո՛ւ. սակայն որովհետեւ.

մինչեւ ընդհակառակը:

Չպախեան. — (Տուցամատով) Ես ըսի նէ. դուք ըսիք նէ. անոնք ըսին նէ...

Շահրիբեան. — Հէնց մի սկզբը բռնեցային հարց, թէկուզ ան լինի սօցիալական...

Չօհրապ. — Տիկններ, պարոններ...

Անեմապե. — Ներքին կանոնադրին. 71րդ. յօդուածին տրամադրութեան համաձայն Պ. Չօհրապ կը մոռնայ թէ հոս Տիկնն չի կայ:

Պաշտպան Վրդ. — Կը բողոքեմ...

Հայկազն. — Կը ձայնակցիմ...

Ա. Գասպարեան. — Վարպետս ըսածը...

Գարսեան. — Պէտք է դիտնալ որ...

Անեմապե. — Խօսքը՝ Արամեանցին է:

Արամեանց. — Օրակարգին անցնինք,

Ժամը 10ին 10ը մնացած էր:

Ժողովականները բողոքեցին եւ առարկեցին թէ դեռ տասը վայրկեան ունին եւ օրակարգին անցնելէ առաջ պէտք էին վիճաբանիլ թէ՛ նոյն օրը կամուրջին գլուխը Արեգակ կա՛ր թէ ոչ:

Վիճաբանութիւնը շարունակուեցաւ եւ թեր ու դէմ կարծիքներու փոխանակութիւնէ եւ կարգ մը ար-

ժանախառն թիկնաթոռներու վկայութիւնները լսուելէ ետք, վճռուեցաւ թէ՛ կամուրջին գլուխը արեգակն...

Արեգակ կար:

Արամեանց. — Կը պնդեմ թէ պէտք է օրակարգին անցնիլ...

Եւ 72 ժողովականներ մէկիկ մէկիկ օրակարգին վրայէն անցան եւ մտան օրակարգին մէջ:

Ժամը 10¹/₂ էր:

Բայց օրակարգի երկրին մէջ ստատիկ ցուրտ կը տիրէր. ազգ. թիկնաթոռները փափկակալմ է մեծամասնութեամբ պառլամենտ դառաւարդէն՝ դուրս ելան, յաջորդ նիստին օրակարգին մէջ մտնելու հաստատ որոշումով, բայց պայմանաւ որ Դիւանը օրակարգին մէջ վառա-

րան մը զետեղել եւ վառել տայ:

Արեգակ Ազգ. թիկնաթոռները իրաւունք ունէին:

Նախ «Կեցցէ՛ անձն իմ եւ ապա օրհնեցից զքեզ...»

Ժողովը փակուած հռչակուեցաւ ժամը 11 ին եւ հանդիսականներն ու դերասանները՝ այս Ազգային Զաւեչտին, մեկնեցան դո՛ւ եւ ուրախ ապաւորութեան մը տակ:

ԱԶԳ. ԽՄԲԱԳԻՐՆԵՐՈՒ 24րդ թիկնաթոռ

ԹԵՂԱՆՕԹՆԵՐ ՈՐՈՏԱՅԻՆ

ԳԵՂԱԿՆԵՐԸ ԴՈՒ ԴՈՒԱՅԻՆ

Բամբը որոտան...

Որոտաց հինգչաթի օր թնդա-

նօթը Թալիմանէի. այն թնդանօթը որ թէեւ բռնապետական Ռէժիմի մը մէջ ձուլուած ու բռնապետական կառավարութեան մը տարեղբայրներ միայն կը բանար իր բերանը, այո՛ր որոտաց հինգչաթի օր:

Շատեր «աչքը լոյս» ըսին.

Իմ աչքս, որչափ որ գիտեմ, մութին մէջ չէր եւ նոր լոյսի մը պէտք չունէր:

Խորհրդարանը բացուել է եղեր:

Հոգս...

ԾԱՂԻԿ-ԿԱՎՈՐՈՇ

ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

ԿՏՐՕՆ ԹԻՒ 4 ԴԵԿ. 8

ՅՈՒՆՎ. 15 (Ը. Ե.) ՎԻՃԱԿԱ-
հանութեան համար մասնակցե-
լու իրաւունք:

Անա՛ քսան (20) էժիբօիէնի Թիւերը	
25195	212371
54777	212372
75862	212373
78987	212377
78988	212379
106602	271039
106605	286463
106607	334229
127106	334230
152940	334231

ուանշանին Ա. կարգը Ակադեմական
և Դատական նախարարութեան խոր-
հրդական խնդիր պէյ Սիմօնի: Իսկ
Ա.ԿԱՎԵՄԻՈՅ ԴՈՒՆԱՊԱՆԻ Բ. կարգի
պատուանշան Ղալաթիոյ համալսա-
րանին տնօրէն ծանօթ երկրախոյզ Պա-
ռօն Սըր Հինդլեանի:

ՄԵՏԱՔՍԻՒ ԳՈՒԼՊՍ պատուա-
նշանին ականակուռ աստիճանը և
ժապաւէնը Օր. Նինի որ վերջերս
մեր կայսրութեան պալատին Աւագ
թարգմանահի պաշտօնին բարձրա-
ցած էր: Նոյն պատուանշանին Բ.
կարգը Օր. Զապէլ Զաքարեանի և
Օր. Սիմօնովիչի:

ԻՍԲԻՆՉՁԱ ԵՒ ՆԻՉԷ պատուա-
նշանին Բ. կարգը Յօն Միխըլ Շամ-
տանճեանի, Տօքթ. Թօքլընի և
Միխըլ Նազիկի, որոնք ինչպէս
յայտնի է Պերլինի, Վիեննայի և Բէլ-
թայի Հայկական դեսպան անուան-
ուած էին:

ԻՆՇԱԼԼԱՀ պատուանշանին ա-
կանակուռ և մեծ ժապաւէնը Օսմ.
Երեսփոխաններուն:

ՊԱՇՏՈՆ

Բեքինի Հայկական դեսպանատան
զինուորական կցորդ նշանակուեցաւ
Գնդապետ՝ Մամթէոս Երէցեան, որ
հրաժարած էր Դաւրէթի հիւպատոս
ստեփան պաշտօնէն:

Բեանդըրիի Կուսակալ անուան-
ուեցաւ Դաւիթ Սալկոնց, այս առ-
թիւ աստանալով նաև «Աքսոր» պատ-
ուանշանին միջնակարգ խաչը:

Բերայի Ընդհ. Զինուորական
հրամանատար անուանուեցաւ Ա.
Յէրիք Ժէնէլալ Տօքթ. Վ. Թոր-
գոմեան հրաժարած ըլլալով Կայս-
րութեան Բաւլամէնդի նախագահի
պաշտօնէն:

Կիկօ մարտանաւին հրամատար
անուանուեցաւ ծովային գնդապետ
Նշան Ճիվանեան, պահելով նաև ծո-
վային խորհրդոյ անդամակցութեան
պաշտօնը:

Կայսրութեան պալատին Պաշ-
տօրը Զօրաց հրամանատար անուան-
ուեցաւ միլիտար Գառնիկ Հայկեան
փաշա, հրաժարած ըլլալով Սասգիւ-
ղի դեսպանութեան պաշտօնէն:

Դուրշուկու լոտնի Կայսրութեան

Զնքոյի մէջ Գետնուղ բաղնիքնե-
րու տնօրէն կարգաւեցաւ Թէլլաք
Աւետիս աղա:

Բերայի կլորական ժողովին անդամ
նշանակուեցան հետեւեալ երեքները
(երեւելի)՝ Ծաթթարգատէ Լեոնաքի էֆ.
Խտարէզատէ Սալլօ պէյ, Նիշանզատէ
Պետրի պէյ, Հանեասզատէ Օննիկ պէյ
և Լէոն պէյ Դէվօնաքի: Այս ժողովը
իր առաջին նիստը գումարեց և նա-
խագահ ընտրեց Ծաթթարգատէ Լե-
ոնաքի էֆէնտին, որ կարող ու
փորձառու կլոր մըն է:

ԱՊՏԱԿՆԵՐ

ԶԱՐԿ, ԲԱՅՅ ՄՏԻԿ ԸՐԷ

Արեւեան-Արմէնեան խումբը ուր-
բաթ իրիկուն ալ իր փառքին գա-
ղաթնակէտին վրայ ելաւ և մասնա-
ւորաբար Պ. Արեւեան, որ Տօքթ.
Շթօքմանի դերին մէջն էր: Թատ.
րոնը լիքն էր ըսելը աւելորդ է, ու-
րովհետեւ ամբողջ Բերան ու չըլա-
կաները հոն էին: Իրար խղճելու
չափ սեղմ բաղմութիւն մը: Աղուոր
հուրիններ, գեղանի, հմայիչ ու հրա-
պուրիչ: Տիգրան Զաւէն՝ յաւիտե-
անական ինքնահաւանը՝ ելաւ թղթի
վրայ, մանկապարտէզի տղու մը պէս
կօնփեռանաւ արեց: Աստուած կօնփե-
ռանաւ անէ. ասոր անունը պէտք էր
գնել թատերական քրօնիկ: Բաւա-
կան մը սուրբցին և ոմանք ալ անուշ
անուշ քնացան: Այդ իրիկուն թա-
տերական ներկայացումէ աւելի կօն-
փեռանք իրիկուն էր: Յաջորդաբար
կօնփեռանաւ արին Բիէն. Բիյեառ, Ակ-
նունի, Վարդգէս և Սէլիմ Սըրրի՝
օթեակէն: Գր. Զօհրապ Բեմէն, Պետ-
րոս Հալաճեան ալ պիտի ընէր բայց
կարծեմ իր ըսելիքները... ասունը
մոռցած էր: Այս իրիկուն «Պատուի
համար»ը, Շտապեցէք. այս իրիկուն
հրաշալի է Արեւեան - Արմէնեան
խումբը:

Կեդրոնական մանկապարտէզը
(վարժարանը ըսել կ'ուզենք) բայց-
ուեցաւ: Զօրու չօճուիս լեցուե-
ցաւ: Հինդլեան Վարպետ Տուտուի
պաշտօնը ստանձնեց և կեդրոնական
մանկապարտէզի՝ Կ. Մ. Պ. սկզբ-
նադասերով կարմիր գոգնոցները ա-
պշարուեցան: Իսկ այս չօճուիսե-
րուն պատուելի նշանակուեցան Տի-
րան Զրաքեան և Տիգրան Զէօլիւր-
եան: Առաջինը Հայերէնի դաս պիտի
տայ իր գրքերուն վրայէն և եթէ
տղաք իր գրքին լեզուն հասկնալու
վիճակին հասնի՞ն պիտի նշանակէ թէ՛
աղաք բաւական սրամիտ են:

Օսմ. Երեսփոխանները նախըն-
թաց օր Սուլթանին մեկնելէն վերջ
յուզուեցին են. պատճառը հարցուցեր
են և խեղճ Երեսփոխանները լալ սկ-
սեր են և հեկեկալով պատասխաներ
են թէ Սուլթանը երգում չըրաւ, և
ատար համար կուլան: Ոմանք ալ
բարկացածի երեւոյթ ունէին. Աստ-
ուած վերջերին բարի ընէ. Ամէն:

Բերացի կարգ մը երիտասարդներ
երէկ Վարիէթէի մէջ կործանեցին
Արշակունեանց թագաւորութիւնը:
Խեղճ Արշակունեանց թագաւորու-
թիւն. իր մէկ անգամ կործանուիլը
չէր բաւեր՝ երէկ ալ հիմնայաւասկ
կործանեցին: Աստուածնիւր սիրէք.
Երբ մարդ պիտի ըլլաք:

Գահաժառանգին պալատին վը-
րայ եղած դէպքը անկարելի է ե-
ղեր. հաւատք պէտք է ընծայել ե-
ղեր, գործը պէտք է ծածկել եղեր:
Գահաժառանգին պալատը մտնողը
մարդուկ մընէ եղեր. որ ուրիշ
բանի աչք չունի եղեր, այլ գահա-
ժառանգին աղախիններուն, որոնք
աչքէ անցնել կ'ուզէ եղեր: Այս յար-
մարցուած սուտին վրայ, խնդիրը
փակուած կրնաք համարել:

Հորոյ՝ չարաթ օր ժամանակի
բարձունքէն՝ բացատրած էր թէ ի՞նչ
է ծերակոյտը և եղբակցուցեր էր
թէ՛ ծերակոյտ կը նշանակէ ծերերու
կոյտ: Աֆէրիմ Պ. Հորոյ, աշխ-
տան պէ՛. այդքան սրամիտ հէ՛.
պաւլօ՛: Ժամանակ կ'աւելցնէ թէ
արդէն Հորոյ կարկառուն դէմը մըն
է: Չենք գիտեր թէ Հորոյի դէմքը
ուռեցած էր որ կարկառուն երեցած
էր ժամանակի աչքին:

Արեւեան և տիպ. Պորժալեան առ-
ջի օր այցելել են «Մէսուտիէ» զրա-
հաւորը որ անկու եր է Տօլմա Պաղչէի
պալատին առջև: Տիկ. Պորժալեան
«Մէսուտիէ»ի հրամանատարին հար-
ցուցեր է թէ՛ ինչո՞ւ արդեօք այդ
զրահաւորը Պէշիքթաչի առջև կե-
ցած է: Հրամանատարը պատասխա-
նել է թէ տեղեկութիւն չունի և ե-
թէ այդ մասին նոր բան մը իմանայ
անմիջապէս կը հեռագրէ իրենց:

Ապստամբութիւնը միայն Մակե-
դոնիոյ մէջ չըլլար եղեր. կեդր.
բանտին մէջ ալ տպաւորութիւն
ծագեր է և բոնտարկեալները ինք-
նօրինութիւն ուղեր են կարծեմ և
փափաքեր են նոր կայսրութիւն մը
հիմնել:

Սուլթանը շատ նեղ գտեր է Օսմ.
Խորհրդարանին շէնքը: Մենք և միւս
պաշտօնակից խմբագիրներ, առջի-
ւէն այնքան պուռացինք ու կանչե-
ցինք. բայց մեզի հաւատացող չի
կար. հիմա որ Սուլթանը կ'ըսէ,
պէտք է հաւատալ:

Ճաշոնական Յիւսէօ թերթը որ
Թորքիոյ մէջ կը հրատարակուի, նոյն
քաղաքին դիտարանէն տեսեր է թէ
Պալքաններուն վրայ ահարկու փո-
թորիկ մը պիտի պայթի մօտ օրերու:
Աֆէրիմ Յիւսէօ՝ թա՛ Ճաշոնէն հո-
վերուն հակառակ ուղղութիւնը չա-
փեր, զինք և հասկցեր է որ փոթո-
րիկ մը պիտի ելլէ: Իսկ մենք հոս
բանէ մը խապար չունինք եղեր...:

Աւստրիացիները Թուրքիոյ հետ
բարեկամանալ կ'աւելն կոր եղեր:

բարեկամանալ: Չեզի հետ բարեկա-
մացողին խերն եմ անիծեր: Նե Շա-
մըն շեֆերի, նե առապրն երեզի:

Մագ է մնացեր ժողովուրդը հինգ-
շարթի օր եռահայի պիտի բռնէ եղեր
Աւստրիոյ դեսպանը:

Սանքիմ դեսպան ըլլալն ալ միշտ
աղէկ բան չէ:

Երէկ Բըթի-Շանի թատրոնը ծա-
փահարեցին նորատի դերասանուհի
մը, որ հայերէն ոսկի արտասանու-
թիւն մը ունի...:

Խօսած ատեն սակինք կը թա-
փէին բերնէն...
Ժողովեցինք:

Թուրքիոյ կարգի մտնելը եւրո-
պական տէրութեանց ամենեւին գոր-
ծին չէ եկեր:

— Ի՞նչ ապուր կերաւ Տե Թուր-
քիա մարդ ըլլալու ճամբան մտաւ,
կ'ըսեն բոլոր եւրոպական տէրու-
թիւնները:

Գիտէ՞ք անոնք ի՞նչ կ'ուզէին:
Բայց հարկաւ գիտէք...:

Թէքիրտաղցի՞նք ընկերներ սա:
տիկ զայրացեր են (մոռցեր են քա-
ղաքի խմբու) որ ես անուան կ'առ-
դարացնեմ և բապուճներս առած եմ
ինկած եմ «իրենց Հերմիէնէին ետեւէն.
մենք Զեփիւռա... գող ալ եղեր
ենք: Է պապա՛մ. ուրի՛շ: Մենք,
Պուրեցիներս անկուշտ ենք եղեր
(սխալ ես Ակնցի եմ.) իսկ Օր. Հեր-
միէն մեր վրայ չի թքեր եղեր,
իսկ Թէքիրտաղցիներուն վրայ պօլ
պօլ կը թքէ եղեր...: Յիշեալ օրի-
որդին անունը տէ՛ն օր բերանս պի-
տի առնեմ սիրելի Թէքիրտաղցի՞նք
ընկերներ, հակառակ անոր որ դուք
... Թէքիրտաղցի էք եղեր և այն-
քան համբաւաւոր ձեռնարկներու
հայրենիքին տէրն էք եղեր...:

Կը լսենք թէ Պուսայ քաղաքա-
պետութիւնը շատ մեծ ուրախու-
թեան մէջ է. պատճառը հարցու-
ցինք, փնտռեցինք և հասկցանք որ՝
այսօրերս օդը բաց ըլլալէն է, որով-
հետեւ օդը բաց ըլլալով արեգակ
կ'ելլէ և արեգակ ելլելով փողոցները
կը չորնան, փողոցները չորնալով կը
մաքրուին ցեխէ և փողոցները մա-
քուր ըլլալով ժողովուրդը կ'աղօթէ
քաղաքապետութեան թանկագին կե-
նաց և արեւադարձեան համար: Ա-
մէն:

Օրմանեան Պատրիարք տեսնելով
որ իրեւ տմբաստանեալ ինք մինակ
մնացած է, նախորդ Վարչութեան
անդամներն ալ ամբաստանել է: Ա-
ֆէրիմ Օրմանեան. տեսա՛ր մի՛ ձիդ-
ուիթութիւնը զուռ նեղ օրերուդ մէջ
ա՛րքան օգտակար կը հանդիսանայ և
քեզի մինակ չի ձգեր...:

ՎԱՂԸ «ԿԱՎՈՐՈՇ»

ԱՐՏՕՆԱՏԵՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

ԱՊԱՌԻԿ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԾԱՄ ԿԱՄ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿ
5000Է ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԷՆՔ 5000

Տեղական և Բարիզի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմա-
տեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, տսեղ, ևայլն. նաեւ անու-
նեղ սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ
ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի
յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու գլ-
խարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա
վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջազգեստի կերպաններ, պատ-
րաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, ևայլն, և
զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուսանկարի, կրամօֆօն,
ինչպէս նաեւ կարի (ձօնա, նովման) ևայլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կան-
կարասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վե-
րաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղ-
նիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ եւն.:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ չանած է հան-
րութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանքաց տո-
կունութիւնը, նրբութիւնը և աժանութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողին % 5 զեղչ

Շաքարական եւ ամսական վճարմանց համար
հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԺԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մեծ Շուկայ, Ոսկերչաց Մեծ Փողոց թիւ 13,



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ:

ՈՐՈՆՔ ԿՈՒՋԵՆ ՊԱՇՊԱՆԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԷՏՔ Է ԱՄԷՆ ՕՐ ԴՈՐՄԱԾԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՄԻ ԿԱՐԴԱԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՏՈՂԵՐԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒԱԾ 1960

ԱՄԵՆԱՇԻՆ

ԳԵՂՉԵՑԿԱՅՆՈՂ ԲԵՐՄԸ

ԿԸ ԳՏՆՈՒԻ —

II ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՆԻՇԻՆ Եւ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂՄ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՁԱՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՅ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՅԱՐՉԱԿԱՊԷՍ ՄԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ԷԲԵՑԱՐԱԿՈՒԹԵՆՆԵՐԸ

ՅԱՌԱՋԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բաժնի գրքերը

Ահարոնեանի գործերը

Զօպանեանի գործերը

Եւ այլն, և այլն, և այլն:

Դիմել Դաշնակցական Ժողովրդական գրասուն

22, Մարքուճըրյար

ՀԱՅ ԶԻՆԱՎԱՃԱՌ ՂԱԼԱԹԻՈՅ

ԶԱՐԵՀ ՊԵՆԿԼԵԱՆ

Ուղղակի Ամերիկայէն բերել տուած եմ ամենալնտիր զէնքեր, վա-
ճառելի կանխիկ եւ ամսական վճարումներով:

Դիմեցէ՛ք Ղալաթիա, Դարաֆէօյի բաղնիքիմ կից թիւ 57
վաճառանոցը:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ԱՍԹԻԿ

Զմեռը մօտեցաւ, անձրեւները սկսան, հետեւաբար լասթիկները և լաւ
լաստիկները կարեւոր մէկ առարկան սկսան ըլլալ դարձեալ մեզի... մահ-
կանացուներուն համար:

Լաւ լասթիկ ունենալը կը նշանակէ թէ լաւ խելք ունիք և չնորհըով
մարդիկ էք: Արդ զիմեցէ՛ք, զացէ՛ք առէ՛ք Ֆրանսական այն լասթիկները
որոնք շատ քիչ փնայած են և 4 ամիս կառանքիով կը տրուին: Անցեալ
տարի այս ապրանքը կամուրջին գլուխը Շեքսպիրին խանութը փոքրա-
քանակ, իսկ Ալլըր էֆ. խան, Նո. 27 Պօղոսօֆի քով կը ծախուէր մեծա-
քանակ. հիմայ թէ մեծաքանակ և թէ փոքրաքանակ կը ծախուէր Պօլիս,
Ալլըր էֆ. խան, թիւ 27, տիար Մկրտիչ Պօղոսօֆի գրասենեակը:

Ո՛վ Ծաղիկի և Կալոռօշի ընթերցողներ, վազեցէ՛ք տիար Պօղոսօֆի
քով և անպատճառ գնեցէ՛ք հատ մը:

Բերայի յաճախողաց դիւրութեան համար, մանաւանդ կանանց, սոյն
ապրանքներուն ամէն տեսակներէն կը գանուի գերձակ Տիար Երուանդ Մի-
րիճանեանի քով, Կալաթիա Մէրայի քովի փողոց թիւ 14 արարթըմանը:

La Grande Fabrique



1908Ի ԶՄՐԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՑԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Է Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

TH. MOURIADÈS

ԲԻՐԱ, ՊՅՆՄԱՐՇԼԻ ԲՈՎ ԹԻԻ 273

ՄԵՏ ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ'ուզէ՛ք շիք, բարեձեւ և դիմացկուն կօշիկներ հագնիլ, ապապրուած
կամ պատրաստ, զիմեցէ՛ք վերի հասցէին և հոն պիտի գոհացնեն ձեզի՝
կատարեալ դիւրամատչելի պայմաններով:

Ուր մը՝ առանց գեղեցիկ ու վայելուչ կօշիկի՝ չա՛տ ազեղ բան է,
մանաւանդ կիներուն քով:

Ասիկա միտքերնիդ դրէ՛ք և դիմեցէ՛ք Բերա, Պօնաբլէ՛ժը, թիւ
278, Թ. ՄՈՒՐԻԱԴԵՍԻ:

ՄԱՍՆԱԿԻՏ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹՈՒ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիզի համալսարանէն, և անձնական ատամնաբոյժ եր-
ջանկայիշատակ Մուզաֆէ՛րէտաֆն Շահին:

Բերա Մեծ Փողոց, ուսումական դեպքանաւան դիմաց Սիթէ տը Սիբի,
ուր կը դարմանէ ամէն տեսակ ակռայի, լինտի և բերնի հիւանդութիւններ
վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակռաներ սոսն քրօչէ է սան
բլաք տասը տարի ապահովութեամբ:

Սոյն դարմանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամե-
նապիլիքին հնարուած գործիքներով, որով ենթական՝ ամէն տեսակ գործո-
ղութիւնները պիտի ընդունի, առանց ցարի և առանց քնացուելու: Դար-
մանատունը Բարիզեան մասնագիտական վերջին սխալէ՛մով, իր տեսակին
մէջ եղական է: Այցելեցէ՛ք և դատեցէ՛ք: